որոնք անցել են արցախուիու ցաված ու երազող
սրտի միջով: Կյանքի, սիրո, կարոտի, կորստի,
վշտի, ակնկալության ծփանքներ են դրանք,
կնոջ, մոր, քրոջ, սիրածի նուրբ խոստովանու-
թյուններ՝ ուղղված մարդկանց, աշխարհին: Այս
հանգամանքն էլ հենց հուշել է ինձ առաջ բարգ-
մանել Ծովինարի բանաստեղծությունների մի

զգալի մասը, որ գետեղվել է նրա «Յավ՝ ծնված երջանկությունից» ժողովածուում:

Հիմա Ծովինարի նոր գիրքն է ներկայացվում ընթերցողին՝ իմ թարգմանությամբ, որը կատարել եմ հաճույքով ու նվիրումով: Տարիները ոչինչ չեն փոխել բանաստեղծուին հուզաշխարհում ու կենսափիլխոփայության մեջ: Նույն ստեղծագործողն է՝ աշխարհի ու մարդկության հանդեպ մայրական նուրբ ու անմիջական զգացումներով, քնարերգուի սիրով ու տագնապներով, գարնանացող արցունքներով ու շոյող հույսերով, հայուին ներքին հպարտությամբ ու կենսափիլխոփայությամբ:

Այս անգամ Ծովինարը ցուցաբերել է ստեղծագործական խիզախություն, դիմել է քառյակի դժվարին ու կայուն ժանրին: Եվ կարող ենք ասել, որ հաջողվել է նրան՝ գրելու հարյուրից ավել քառյակներ, որոնցում երևում է ժամանակակից մարդու խոհերն ու ապրումներն արտահայտելու բանաստեղծական շնորհ:

Յոթանասնամյա կյանքի իր բարձունքից նա

դիմում է լճթերցողին՝ սիրել հայրենի օջախն ու եզերքը, լինել ընկերասեր, լավատես, հասկանալ կյանքը և ժամանակին գնահատել նրա պահերը, լինել նրբանկատ, անտեղի չխցել բարեկամի սիրտը, կյանքը զարդարել ծառերով ու վարդերով, լինել համեստ, պաշտել ծնողներին, երեխաների հանդեալ լինել հոգատար, ձգտել՝ շմնալ մենակ: Բոլոր ժամանակների համար է ասված Ծովինարի այս իմաստությունը.

*Մի հավատացեք, որ մենակ կիմը
բերկրանքի մեջ է,*
*Մի հավատացեք, որ մենությունը
կանայք կսիրեն,*

*Որ կնոջ համար մենակ ապրելը
երազ է, դրեւ է,*
*Մի հավատացեք, նա խարում է ծեզ
ու նաև իրեն:*

Ստեղծարար ու երախտագետ մարդկանց անունից է խոսում Ծովինարը: Նրա քնարական հերոսը խորհում է՝ շնորհակալ լինել կյանքից՝ տվածի համար, նաև իր «զուր չանցած տարիների»:

Ծովինարը չի ժխտում իր յոթանասուն տարիների անցած փունջը, գտնում է, որ մարդու հոգու մեջ երբեք չեն քնում գարնան ծաղիկները, ուստի պետք է շարունակել խնամել ու փնջել դրանք և ընծայել սերունդներին.

*Տարիներն արագ անցնում են, ընկեր,
Եվ փոփոխվում է մեր շուրջն ամեն ինչ,
Ժամանակն է, որ ինքդ էլ փոխվես,
Յանես բարության երազներդ ջինջ:*

Ծովինարը ծով քնքշությամբ փառաբանում է մորը, որը «խղճի կերոն է, մայրենի բարբառ»: Մոր համար ամեն ծնվող մանուկ մի մեծ աշխարհ է.

Աշխարհ է եկել այսօր մի մանուկ,
Իր շուրջն ամեն ինչ փոփովել է մեկեն,
Արևն ավելի պայծառ է ժպրում,
Մորք քվում է՝ արև է երկնել,
Փոքրիկ մի մանուկ, ժպրացող նշխար,
Մայրիկի համար մի ամբողջ աշխարհ:

Բանաստեղծուին մարդկային հուզաշխարհի անտես ու նրբերանգ լարերով է կապված աշխարհի հետ: Նա խորհուրդ է տալիս չխաղալ կրակի հետ, չմոռանալ միմյանց սիրելու Աստծո պատվիրանը.

Աշխարհը մեծ է, սակայն կյանքը՝ կարճ,
Բոլորն իմաստուն դառնալ չեն կարող,
Սիր նախնիների դասը միշտ հիշենք՝
Սիրենք իրարու, լինենք համբերող:

Ծովինարը հայրենասեր բանաստեղծուի է: Նրա ուշըն ու միտքը հայրենի երկրի, հայրական օջախի հետ է: Եվ հաճելին այն է, որ այդ

գեղեցիկ զգացումն արտահայտում է բանաստեղծական պատկերների հյուսվածքով, սրտի ցափով ու տազնապով.

*Ծոգ ամառ էր...
Ճարճքել էր շուրջը հողի,
Եվ այդ պահին երկնի մովում
Ելան ամպերն՝ առանց ցողի...
Հովերև ապա պար բռնեցին
Եվ ամպերին հեռու դարան...
Դաժան պար էր, սիրոս ցավեց՝
Պարարի հողը մնաց ծարավ:*

Ծովինարը միաժամանակ խորհուրդ է տալիս՝ ապրել ազնիվ, չինել ազահ, եսակենտրոն, օտարամոլ: «Ուր արմատն իմ հիմը չէ, Ինչ օտար է՝ իմը չէ», - գրում է բանաստեղծուին:

Ծովինարն այն համոզմունքն ունի, որ մարդն է ստեղծում իր ժամանակը, չի կարելի ասել «Զեռքս չի հասնում, ուժս չի ներում, չունեմ ժամանակ», որովհետև «կյանքը թափով գալիս է-գնում, ժամանակը քիչ է, զործերն՝ անքանակ»:

Իր քառյակներում Ծովինարն ստեղծում է իր պատվիրանները՝ ժողովրդական իմաստախոսությունների երանգներով: Այսպես. «Խորհենք, թե վաղը ինչ պիտի անենք», «Եթե ուզում ես ապրել պատվարժան, թեզ պատվով պահիր արարքներիդ մեջ», «Ինչ երկրի համար է, իմ ծիածան-կամարն է», «Սերը չի ծերանում, չի մահանում սերը... Երջանիկը նա է, ով գտնում է սերը» և այլն և այլն:

Ծովինարը դիմավորելով կյանքի իր աշունը, «չի տիսրում, զգում է հողի բուրմունքը... սարերի հնայքը... լսում՝ դարերի պատզամը» և հաստատում, որ «Աշունը բոլորի համար է....»:

Պետք չէ զայրանալ կամ տրտնջալ, այլ պետք է սովորել նրանից՝ բարիքներով կյանքը զարդարելու առեղծվածը:

Ծովինարը քարոզիչ-խորհրդատու չէ, նա իր կյանքով ու երգով միշտ եղել է իր ծննդավայրի հետ ու հարազատ դստեր իրավունքով է բարձրաձայնում.

Ես իմ լրանն եմ, իմ լրանն եմ ես,
Իմ քաղաքի ջերմին գրկում...
Նա Մուսայիս լույս ուստանն է՝
Իմ երգի պես միշտ իմ սրբում:

Ծովինարի բոլոր ընթերցողները հաստատում
են նրա այս սրտաբուխ խոստովանությունը,
մաղթում քաջառողջություն ու ստեղծագործա-
կան նոր հաջողություններ՝ ի փառս մեր նորօր-
յա քնարերգության հարստացման:

Սովորակ ԽԱՎԱՅԱՆ

Բանասիրական զիկուրյունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀԿ զիկուրյան վասկակավոր գործիչ

**ՈՂՋՈՒՆՈՒՄԵՆ
ԾՈՎԻՆԱՐԻ
ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ
ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ**

ԱՇԽԱՆ ԵՐԱՎԳՆԵՐՈՎ ԳԱՐԱՎՆԱԲՈՒՅՔԻ ԾԱՂԿԵՓՈՒԶ

Պոեզիայի երկրպագուներին հերթական անգամ հաճելի անակնկալ է մատուցում Արցախի գրական ընտանիքի անդամ, ռուսագիր բանաստեղծուիի Ծովիհնար Բաղդասարյանը՝ ընթերցողի սեղանին դնելով «Աշնան ծաղիկներ» բանաստեղծությունների երկեզու ժողովածուն՝ համաժամանակ ռուսերեն բնագրով և հայերեն թարգմանությամբ:

Ծովիհնար Բաղդասարյանը նուրբ քնարերգու է, մի շարք ժողովածուների հեղինակ: Կանացի շուքով ու հմայքով լեցուն նրա գողտրիկ բանաստեղծությունները, առանձին-առանձին և իրենց ամբողջության մեջ, տառապյալ, բայց և լավատեսության անսպառ լույսն իր ներաշխարհում ամբարած հայ կնոջ հոգու փայլատակումներ են՝ ի հակակշիռ կրած զրկանքների ու կորուստների, ապրած դառնու-

թյունների ու վշտերի ծանր բեռի: Երբեմն այն տպավորությունն ես ստանում, թե բանաստեղծուիհն դիցաբանական Անթեյի առաքելությունն է ստանձնում իր փիսրուն ուսերին՝ ձգտելով հոգու կրակը, տաք շողարձակումների մեջ բարուրած, պահ տալ որքան հնարավոր է՝ ավելի շատ մարդկանց, ամրապնդելով գալիք լավ օրվա նրանց բոլորի հույսն ու հավատը:

Այդ լուսաշող լավատեսությամբ է ներծծված նաև բանաստեղծուին այս նոր ժողովածուն, որի մեջ քառասողերի ձև ու չափով ամփոփված գործերը, աչք ու հոգի շոյելով հանդերձ, միևնույն ժամանակ ստիպում են մտորել, որ, անկախ շարահյուսվող կյանքի մակընթացություններից ու տեղատփություններից, ոչինչ անցողիկ չէ մարդու հոգում ու մտապատկերում, այլ մնայուն ապրում է, ավելին՝ ի զորու է ապրեցնել, եթե գոտեպնդված է եռամիասնական կենարար շաղախով՝ Հույսով, Հավատով ու Սիրով:

Ի լրումն ասվածի, կարևորեմ նաև, որ ժողովածուն բարձր արվեստով քարզմանել է արդի հայ գրականության նահապետներից մեկը՝ անվանի գրականագետ, բանաստեղծ Սովորատ Խանյանը:

Ծնորհավոր Զեր տարեղարձը, տիկին Ծովինար, երկար կյանք Զեզ, նոր քնարական հայտնություններ, անթառամ գեղեցկություն: Համոզված եմ, «Աշնան ծաղիկներ» ժողովածուն ևս մեկ ուշագրավ հանգրվան է Զեր ստեղծագործական ճանապարհին, աշնան երանգներով, բայց և զարնանաբույր ծաղկեփոռություն՝ շնորհալի բանաստեղծութու, հոբելյանի առիթով:

Միքայել ՀԱԶՅԱՆ
լրագրող, հրապարակախոս

ԾՈՎԻՆԱՐ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆԻ ՀՈԳՈՒ ՈՒ ՄՐՏԻ ՊՈԵԶԻԱՆ

Ծովինար Բաղդասարյանի պոեզիան առանձնանում է, նախևառաջ, ոգեղենությամբ ու առավելագույն անկեղծությամբ: Նրա տողերում չկան պայմանականություններ, արտաքուստ պարզության ու ոչ խրթին հանգի հետևում բաքնվում են խորը ու համակող անձնական ապրումներ՝ իր անցկացրած ուրախ ու երջանիկ, տխուր և, ավաղ, թափածու, ողբերգական օրերի արտացոլումը: Սիաժամանակ Ծովինար Սինայանին երբեք չի լրում լավատեսական տրամադրվածությունը, նա չի դավաճանում իր աշխարհընկալմանը, բարությամբ է մոտենում մարդկանց ու շրջապատող ամեն ինչին: Սերը, Հույսը և Հավատը երբեք չեն լրում նրան:

Ապրելով ամենամոտ մարդկանց կորստի անանց ցավով՝ բանաստեղծուիին չի դադա-

րում Սիրո, Բարու և Գեղեցիկի մասին գրելուց՝ դրանց մեջ գտնելով, ինչպես ինքն է խոստովանում, փրկություն ու «վերստին ծնվելով»: ‘Նա սերն է՝ իր ընտրյալի, մոր, փայփայած երեխայի, հարազատ հողի, բնության հանդեպ... Հեղինակը գրում է.

*«Մի՛ շրապեք, մի՛ աճապարեք,
Կյանքով դանդաղ ընթացե՛ք...
Զգացե՛ք ձեր Հողի բույրը...»*

Ծովինար Բաղդասարյանի բանաստեղծական տողերը «արթնանում են արշալույսի հետ, լվացվում ցողով», գետի շառաչյունի, առվակի քչքոցի մեջ նա լսում է կախարդական մեղեղին, ըմբոշխնում սոխակի դայլայլը, նրա «չորս տողերը» միշտ իր հետ են... Նա ձգտում է լիարժեք ապրել, օգալ ի վերուստ տրված յուրաքանչյուր ակնթարթ. «Կյանքի յուրաքանչյուր ակնթարթ անկրկնելի է... Կյանքի յուրաքանչյուր ակնթարթ բանկ է մեզ համար...»: Ընդ որում, նրան «ջերմացնում են

ոչ թե արևի շողերը, այլ խոսքերը, որ կրում է կրծքի տակ...» Դրանք Սիրո ու Բարության ջերմ խոսքերն են, քանզի «առանց Սիրո ապել անհնար է»:

Տարիներն անգոր են Ծովինար անունով կնոց առաջ.

«Յոքանատուն լրարի, ինչ է փոխվել
շուրջու...
Նույնն է արևը, առոյնն են ասլրդերը,
լուսինը...
Իսկ կողքիս՝ նոյն հավալրարիս
ընկերները...
Եվ Երկիրը, որմ ի զորու չեմ մոռանալ...»

Հիրավի «Սերը չի ծերանում, չի մեռնում, չի մարում, չի անհետանում...»

Իր մեծ սրտում ունեցած այդ Սիրով էլ ապրում է Ծովինար Բաղդասարյանը՝ շուրջը սփռելով բարություն ու ջերմություն...

Աշուր ԲԵԳԼԱՐՅԱՆ
գրող, լրագրող, բարզմանիշ

ՍԵՐ՝ ԱՄԵՆԵՑՈՒՆ...

...Ծովինար կինն ու բանաստեղծուիհն իր բովանդակ կյանքով ու ստեղծագործությամբ մերժում է խավարը, չարն ու դաժանը, ու երբ թվում է, թե ահա-ահա՝ կհանձնվի, կկոտրվի, կջարդվի, նրա հոգում լույսի մի շող համառում է այնպես, որ, գերբնական ճիգեր գործադրելով, դիմում է իր հավատարիմ ընկերոջն ու բարեկամին՝ պոեզիային և, որպես փորձված միցոց ու փրկօղակ, գրիչ է վերցնում, մտնում հույսի ու լույսի իր խորանը, յուրովի աղոթում ու խաղաղություն պարզեցում ալեկոծ հոգուն։ Ապա վերադառնում է, գտնում ինքն իրեն, ներդաշնակվում աշխարհին, շրջապատին, բնությանն ու իր համար փոքր-ինչ փայլատ դարձած կյանքին։ Հետո նորից ու կրկին, և արդեն որերորդ անգամ, յուրովի հաստատում վաղուց հայտնի ճշմարտությունը, թե՝ մահվա-

նը կարելի է հաղթել միայն ու միայն արարու-
մով:

Ծովինար մարդն ունի Աստծո տված շնորհ-
ներից օգտվելու մեծ շնորհը՝ լինել կին, մայր,
տատիկ, սիրասուն զավակ, քույր, ընկեր և
կարողանալ սիրել, կարոտել, հավատալ ու
այդ ամենին վրադիր՝ մոխիրների միջից վեր
հանել հոգու պայծառությունն ու նոր բացվող
օրը դիմավորել ժախտով և իմաստավորել ու
գեղեցկացնել այն ու շարունակել սիրել, սի-
րել, սիրել...

Կարինե ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
բանասեր, բարերագեկ,
ՀՂՀ մշակույթի վասպակավոր գործիչ

ԾՈՎԻՆԱՐ ՄԻՆԱՍՈՎՆԱ

Իմ կյանքի ճանապարհին Դուք երևացիք որպես շողշողուն աստղ, որի անսահման լույսի տակ ջերմացավ իմ սիրտն ու հոգին, ինչքա՞ն հուզմունք ապրեցի այս մի ամսվա ընթացքում, քանի՞-քանի՞ անքուն գիշերներ լուսացրի՝ մտովի հիշելով Ձեր չքնաղ դեմքը, աչքերի կախարդական փայլը, զգացի Ձեր հոգու խորությունը: Այո, ես խսկույն գտա Ձեզ, գտա, որովհետև ամբողջ իմ կյանքում փնտրում էի այդքան հարազատ ու մտերիմ մի հոգու, գտա, որովհետև այդպիսի մեծ հոգու կարիքն ունեի, իսկ Դուք միանգամից մտաք իմ կյանքի մեջ, որովհետև Դուք այն էակն եք, որի մեջ ես գտա մարդկային հոգու բոլոր արժանիքները: Դուք մեծ մարդ եք, և ես անշափ ուրախ եմ, որ պատահեցի Ձեզ, Դուք մոռացնել տվեցիք մեզ հետ պատահածը, ես նորից տեսա կյանքը գեղեցիկ, հպարտ: Ձեզ նման ես ևս սիրում եմ կյանքը, մենք հոգով շատ նման ենք իրար, դա

ես ընթերցեցի Զեր աչքերում: Ես զգում էի, որ Զեզ նայում են սիրահարվածի աչքերով, սակայն ուրիշ կերպ չէի կարող, սիրտս լիքն էր հույզերով, եթե հնարավոր լիներ այդ բոլորը բացատրել Զեզ, բայց գիտեմ, որ դուք հասկացել եք ամեն ինչ: Այո, ես շատ երջանիկ էի, որ հանդիպեցի Զեզ, բայց հիմա սիրտս լացում է, որ գուցե և նորից չտեսնեմ Զեզ, ես պետք է փնտրեմ իմ Ծովինարին, չեմ հուսահատվում, գուցե կյանքը նորից կժպտա ինձ, ես չեմ դժգոհում կյանքից, նա ինձ միշտ պարզենել է ամենալավը, ամենագեղեցիկը, թեկուզ կարճատև, բայց ունեցել եմ մեծ, բուռն զգացումներ: Զեր հոգու կրակը, ձեր աչքերի փայլը միշտ կլուսավորի ինձ, այնքան կուզեի, որ միշտ այդպես ջահել ու երիտասարդ մնաք, թող կյանքը Զեզ ժպտա միշտ, որտեղ էլ որ լինեք, լինեք հպարտ ու բարձր, ինչպիսին որ կաք, ինչպիսին ես տեսա Զեզ:

Ես շատ ուրախ եմ, որ հասկացաք ինձ, բանի՞-քանի՞ անգամ այս գիշերվա ընթացքում

ընթերցեցի Զեր գրածը, ինչքան լավ է, որ Զեզ
ճիշտ ճանաչեցի և այն մեծ զգացումները,
ապրումները Դուք հասկացաք, այո, մեր հան-
դիպումը շատ հաճելի էր, լիքը ամենանորք
զգացումներով:

Անշափ խնդրում եմ չմոռանաք ինձ:

Զերմորեն գրկում և համբուրում եմ Զեր սի-
րելի դեմքը:

*Գնացիր, դաւարեկվեց իմ հոգին,
Որ լցված էր քեզնով ավեափ,
Հեռացար, պիտուր եմ ես կրկին,
Տիրությունս մեծ է, անսահման:
Զգիլեմ, հիշում ե՞ս իմ մասին,
Հիշում ե՞ս անցյալը երջանիկ,
Գոնե քիչ պիլռ՞ւմ ես,
Որ այդպես հեռացանք անմեկին:*

Սոնյա ՅԱՂՈՒԹՅԱՆ

16.08.1992թ.

ԱՔՐՈՍՏԻԿՈՒ

Նվիրում եմ սիրված բանաստեղծուիի,
միշտ հմայիչ Ծովինար Բաղդասարյանին

Ծագող արևի ջերմությունն ունես,
Որքան առինքնող ու հմայիչ ես,
Վարդի թերթի պես նուրբ ես ու քնքուշ,
Ինքդ բարի ես, ու խոսքդ անուշ:
Նրբանկատ ես և ներողամիտ, շատ
հումորով ես և շատ սրամիտ,
Արդարամիտ ես՝ լավին ջատագով,
անկախ տարիքից՝ ջահել ես հոգով,
Բուպեապես ես դու կողմնորոշվում՝ բարի,
դրական քո խոսքն ես ասում:
Ինչքան որ ապրես, ապրես երջանիկ,
Քեզ առողջություն և հազար բարիք:

Ամենալավագույն բարեմաղթանըներով և
հարգանքներով, մանկազիր՝
Ֆրիդա ՍԱՀԱԿՅԱՆ

p. Երևան

ԾՈՎԻՆԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ

Ամերիկահայ լնթերցողներին ուզում եմ ներկայացնել արցախահայ մի բանաստեղծուհու, ով գրում է ոռուսերեն, բազմաթիվ գրքերի հեղինակ է, բայց ապրում և շնչում է միայն հայավարի:

Հետաքրքիրն այն է, որ Ծովինար Բաղդասարյանը բանաստեղծուհի դարձավ հենց արցախյան պատերազմի ահեղ օրերին: Երբ պատերազմի դաշտում հերոսաբար կռվում էին ամուսինը, որդիները:

Տասնամյակներ բոլորած հայուհին մեկնեն գրիչ վերցրեց ու սկսեց ապրել բանաստեղծական երփներանգ գույներով.

*Տարիքն այնքան էլ մեծ չէ երգերիս
Եվ չեն ծածկված ճերմակով այնպիս...
Ինչո՞ւ եմ դարձել բանասրեղծուիհ,
Գորշ էր թվում ինձ կյանքը ու դժգույն
Եվ ես ինչ-որ պահ վախեցա հանկարծ...*

Բայց ո՞չ, նա վախեցողներից չէր, զենքի փոխարեն գրիչ էր վերցրել ու մարտադաշտում ամուսնու և որդիների հետ, ասես կովում էր թշնամու դեմ: Ծակատագիրը, որ միշտ շռայլ էր եղել նրա հանդեպ, այդ օրերին ասես երես թեքեց նրանից, կորցրեց սիրեցյալ ամուսնուն, աչքի լույսը՝ պատերազմի դաշտում քողեց որդուն: Ծակատագրի այս հարվածները թվում էին կկործանեն նրան, բայց...

*Չո մասին գրեմ,
Թե բախտի մասին,
Երկրային կյանքի,*

Թե սիրո մասին,
Մեկ է՝ բախտիս հելք
Համերաշի չեմ եւ,
Որ չար կալակով
Խաղում է ինձ հելք:

Ծովինարի երգերի քնարական հերոսը քացախրտ է, հոգեպարար, ազնիվ, անմիջական: Ինչպես կանայք են ծնվում «հանուն մեծ սիրո, ցավի ու խանդի», այդպես էլ աշխարհ են եկել Ծովինարի երգերը: Շշան, պճնագարդ, վերամբարձ և ճառային ոչինչ չկա նրա բանաստեղծություններում: Դրանք այնքան են կենսական, ճշմարտացի, որ հեղինակի խոհերն ու խորհուրդները դառնում են հոգիդ ցերմացնող թրթիռներ, քախիծդ ցրող շողեր:

Քանաստեղծուիին զրուցում է անկաշկանդ, խորհրդավոր, համոզիչ: Նրա երգերը, իսկ և իսկ արցախյան բնության մեղմ շրշյուններ են՝ անցած արցախուիու ցաված ու երազող

սրտի միջով: Իսկ ո՞վ չգիտի, որ սրտից քիսած
խոսքը զտնում է սրտերի ճանապարհը ան-
կաշկանդ ու թևաբաց:

Կարդալով Ծովինար Բաղդասարյանի
քնարական բանաստեղծությունները, կրկին
համոզվում ես, որ բանաստեղծ լինելը աստ-
վածատուր շնորհ է:

Հայկամուշ ՆԱԶԻՆՅԱՆ
լրագրող ԱՄՆ

ԱՔՐՈՍՏԻԿՈՍ

Ճարավ եմ ծարավ այս լայն աշխարհում,
Օվկիանոսն անգամ էլ չի հերիքում,
Վանա լիճը տխուր է, խռով,
Իր գիրկն է կանչում հայերին բոլոր,
Կարոտն առնե իր ամբողջ հոգով:

Միքայել ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՈՎԻՆԱՐԻՆ

Ծովի պես ծփուն ես,
Ալիքի պես՝ քնքուշ,
Սրտիդ մեջ կա հրկեզ
Կարոտի մի տաք փուշ:

Թվում է, թե ձայնդ
Խեցի է գաղտնիքի,
Թվում է հմայքդ
Պարզեն է երկնքի:

Ուզում եմ քո հոգու
Գզվանքները գրկել,
Ինձ ու թեզ կրակուն
Կարոտից այս փրկել...

Համլետ ԿԱՐՃԻԿՅԱՆ
13.07.2010թ.
Ծաղկաձոր



Իմ հոգեբուխ քառատողը
Լրաբերն է այզաքացի՝
Ափերի մեջ գարնան ցողը...
Նա իմ սիրտն է արևածին:



Յոթ տասնյակդ, երբ քո դուռն է ծեծում,
Ու բարձունքին ես դու իմաստունի,
Երբ տենչերով է քո սիրտը լեցուն,
Աստծուց դժգոհելը էլ իմաստ չունի:



Ես իմ տանն եմ, իմ տանն եմ ես,
Իմ քաղաքի ջերմին գրկում...
Նա Մուսայիս լույս ոստանն է՝
Իմ երգի պես միշտ իմ սրտում:



Յոք տասնյակ տարի չի փոխվել ոչինչ,
Նույն ընկերներն են...

սրտամոտ ու ջերմ,
Նույն արեգակն է, նույն աստղերը ջինջ,
Եվ նույն մայր հողն է՝ մի ողջ Տիեզերք:



Միքո, հավատի խաչն է շողշողում
Իմ ազատաբաղձ քաղաքի վրա,
Ես հավատում եմ, որ այդ սուրբ գործում
Աստծո աջն է հովանին նրա:



Ես երդվել եմ իմ երգերին՝
Հրաժեշտ տալ թախսիծին ծով,
Շոյել նրանց, որ ամենուր
Հնչեն ուրախ ու հոգեթով:



Այնքա՞ն բառեր են եռում իմ հոգում,
Այնքա՞ն երգեր են ծփում սրտիս մեջ,
Ազատ կարձակեմ, որ թևեն նրանք,
Որ թերևանա հոգիս բազմատենչ,
Կոունկներին էլ պարզենեն ճախրանք:



Կյանքի պահերը անկրկնելի են,
Չենք էլ հավատում այդ հին օրենքին,
Երբ ճերմակում են զանգուրները մեր,
Նոր ենք հասկանում պահերը կյանքի:



Ես նորից «հպարտ» մենության մեջ եմ,
Երկիրն է ինձնից հեռանում նորից,
Նորից ամպերի երամի մեջ եմ,
Վառ մայրամուտն է մենակ թողնում ինձ:



Ոչ, չեմ լացելու, թույլ չեմ տա և քեզ,
Եվ բավ է, ինչքան բզկտվեց հոգիս,
Տիսրությունը թող չվի ամայի պես,
Կյանքը հաղթում է, հավատա՛ դու ինձ:



Հոգու մեղեղի...

Ինչքա՞ն դժվար է ըմբռշխնել նրան,
Ինչքա՞ն դժվար է գտնել բանալին,
Փայփայել նրան ու լուս հեռանալ:



Բառը բուժում է, ջարդում է բառը.
Բառը ընծայեք առանց բառերի,
Աչքերով շոյեք, շոյեք շուրթերով,
Բառով մի դիալչեք սրտի լարերին:



Հաճախ եմ շրջում թավ անտառներում,
դաշտերում ծաղկուն,
Մտքով հաճախ եմ փարվում երկնքի
աստղաշող մովին,
Դաշտեր եմ տեսնում,
օվկիաններ ծփուն,
Գեղեցիկ ծովում ծնվում եմ նորից,
թևածում անվերջ,
Բայց քնում եմ խոր ունայնության մեջ:





Իմ խոհերի մեջ թարմ է ամեն ինչ,
Ամեն առավոտ նոր երգս է ծնվում,
Նա և՛ լացում է, և՛ ժպտում է զինջ,
Նա իմ խոհերի ծովից է սնվում:



Գեղեցկուիի կին...
Չի խոսում, լուռ է, կարծես կողաքեք կա
շուրթերի վրա,
Ունքերը լարում, նայում է վերից,
Գեղեցկությունը լքում է նրան:



Իմ տունն իմ բերդն է՝ լուսաշող մի կյանք,
Այնտեղ նաև իմ ստվերն է ճախրում,
Իմ տունն իմ բերդն է, հուշերն է իմ թանկ,
Ի՞նչ երջանկություն... մենակ չեմ ապրում:



Յոթը զմրուխտե, անգին քար ունեմ,
Նրանք արևի շողեր են իրկեզ,
Սիրտս քնար է, յոթը լար ունեմ.
Յոթ թռնիկ ունեմ, երջանիկ եմ ես:



Դուսպրը... ամեն ինչ նկատում է նա,
Ոչինչ չես կարող թաքցնել նրանից,
Սրտիդ բառերը հեշտ կարդում է նա,
Քեզ հասկանում է մեն-մի հայացքից...
Նա ջերմություն է հաղորդում մարդկանց
Ու միշտ քեզ մոտ է, քեզ հավատարիմ,
Աստված իմ, Տեր իմ, աղաչում եմ Քեզ,
Պահպանիր նրան գթասիրտ Հոր պես:



Որդին... հասակ է առել, ճերմակել,
Բայց մայրը նրան բալիկ է ասում,
Թե ինչ-որ բանում նա չի էլ հասցրել,
Միայն թե լինի ուրախ ու հասուն:
Նա մեկ անգամ չէ հանդիպել մահին,
Ճամփա է անցել քարոտ ու ահեղ,
Նա մեծ Սեր ունի՝ իր սրտի զահին,
Աստված թող նրանց
պահպանի մեկտեղ:



Ի՞նչ լավ է՝ ապրել այս երկրի վրա,
Լսել ամպրոպի, անձրևի ձայնը,
Տեսնել, թե ոնց են ամպերը պարում,
Թե ոնց է բացվում ալ վաղորդայնը...
Ի՞նչ լավ է ապրել այս երկրի վրա,
Երբ ողջունում են ծառերը իրար,
Երբ կյանքում ոչ ոք չի ապրում մենակ...
Ինձ հաճելի է... ամեն եղանակ:



Սի հավատացեք, որ մենակ կինը
բերկրանքի մեջ է,
Սի հավատացեք, որ մենությունը
կանայք կսիրեն,
Որ կնոջ համար մենակ ապրելը
երազ է, տեսչ է,
Սի հավատացեք, նա խարում է ձեզ
ու նաև իրեն:



Ընորհակալ եմ քեզանից, ով կյանք,
Իմ բերկրանքի և արցունքի համար,
Իմ բաժին բախտի, իմ բորբ արևի
Եվ իմ գրաված բարձունքի համար...
Ընորհակալ եմ այսօրվա համար,
Իմ ընկերների, բարեկամների,
Ընորհակալ եմ տվածիդ համար
Եվ իզուր չանցած իմ տարիների:



Մարդը մենակ է իր ամբողջ կյանքում,
Նա ճշմարտության դռներն է փակում,
Հոգու դռներն ել չի բացում երբեք,
Մարդը մենակ է իր ամբողջ կյանքում:



Մայրն այցելեց տունը որդու,
Կարոտել էր իր քողմներին,
Բայց տնեցիք մորք քողած,
Հյուր գնացին ընկերներին:
Ամբողջ գիշեր մայրը լացեց,
Արցունքաբաց բարձը զրկած,
Սակայն ոչ ոք չհարցրեց՝
Տատի աչքերն ինչո՞ւ են թաց:



Քայլում եմ մեր փողոցներով, նայում
բարձր մեր լեռներին,
Աստղերին եմ նայում անվերջ, սրտիս
խորքում երազ ու երգ,
Այգաբացն եմ դիմավորում, հրաժեշտ
տալիս գիշերներին,
Ես սիրում եմ մաքառելը, հետ չեմ մնում
կյանքից երբեք:



Մնացել է ոչ քի՛չ, ոչ շա՛տ,
Որ անվանեն քեզ Դիցուհի,
Որ անվանեն հայրենապաշտ,
Անահիտված արցախուհի
Ու հմայվեն քո հայացքով,
Ու հոլովեն անունը քո,
Որ միշտ քայլես ճակատդ բաց,
Կյանքը կոչես վառ այգաբաց:



Վերջին աշունը ինձ գիրկը առավ
Եվ հրաժեշտիս քառերը լսեց,
Իմ ծով թախիծը պատմություն դառավ,
Գարունն իմ վառման երազը կիսեց:



Չի քնում իմ Մուսան երբեք,
Երգերս ծնվում են իր հետ,
Իմ հոգու մասնիկն են նրանք,
Իմ Մուսան պարզեց բերկրանք:



Իմ կրտսեր որդին...

Ես նրա կողքին փոքրիկ եմ այնքան,
Բայց սիրու մեծ է, զերմ է իմ հոգին...
Մայրական սերը մի զուլալ գետ է,
Որտեղ էլ լինի՝ իր որդու հետ է:



Անձրև, արի ընկերանանք,
Իմ թախիծը քշիր ու տար,
Անձրև տեղաց, ես քննեցի,
Մոր պես եղավ նա հոգատար:



Առավոտը աչքը բացեց,
Լոեց շանթը՝ ամպրոպացող,
Հանգստացան սարերը մեր,
Լույսդ բարի, հայրենի հող:



Մի մոռացեք Երկրում մանկանց,
Հրեշտակներ են նրանք անմեղ,
Երկրագնդում չարն է վխտում,
Զարդե՛ք չարի ձեռքերն ահեղ:



Վիրավորանքը մի պահիք քո մեջ,
Ջոն հիշողության էջից էլ վանիք,
Նետիր շատ հեռու, որ էլ չերևա,
Բարին չի սիրում չարիքը նանիք:



Մայրը լոին է տառապում կյանքում,
Ինչ էլ որ լինի՝ կարող է ներել,
Վիրավորանքը ջնջելով ճամփից,
Բարությամբ իր ծով կարող է ներել:



Հրաժեշտ չեմ տալիս,
Գնում եմ պարզապես,
Որ չքայքայեմ աշխարհն այն շքեղ,
Որտեղ ապրում եմ սիրող դստեր պես:



Տարիներն արագ անցնում են, ընկեր,
Եվ փոփոխվում է մեր շուրջն ամեն ինչ,
Ժամանակն է, որ ինքդ էլ փոխվես,
Ցանես բարության երազներդ զինջ:



Մայրն Աստված է, Աստված է մայր...
Ուր էլ որ լինես, նա քեզ հետ է հար,
Եվ կարևոր չէ տարիքը նրա,
Նա սրբություն է ձեր խղճի վրա:



Ինձ չեն ջերմացնում շողերն արևի,
Այլ բառերը այն, որ կրծքիս տակ են,
Դրանք բառեր չեն, սեր են, բարություն,
Սահմաններ չունեն և անպարփակ են:



Մամա...

Առաջին թոթովանք ու բառ,
Մեր խղճի կերոն, մայրենի բարբառ,
Տարիների հետ փոխում ենք բառը,
Սակայն չենք փոխում այն սիրո լարը,
Որ երգ է դառնում ու դառնում է տաղ,
Ասում ենք. «Մայրիկ, քո կյանքին
մատադ»:

Երբ ճերմակում ենք ու տարիք առնում,
Մայրը մեր խղճի պատկերն է դառնում,
Հիշում ենք նրա աչքերը շողուն,
Որ մեզ համար է նուրբ սիրտը դողում,
Ասես դառնում ենք մանուկներն այն ժիր,
Որ խնդրում էինք. «Մամա՛, մեզ ներիր»:



Հայկական դուդուկ...

Այն անվանում եմ հոգու մեղեղի,
Հաղթանակի կոչ, սիրո քաղցր կանչ,
Չոհյալի մոր լաց, շրշյուն եղեգի,
Սրտերի թրթիռ, հաղթական բարձունք,
Սիրող սրտերի բերկրանքի արցունք:



Ով մարդ, լավ լսիր,

Չեզ նվիրեցի անսահման երկինք,
Արև ու աստղեր, լուսին ու երկիր,
Օվկիանոս ու ծով, դալար դաշտ ու սար,
Ե՞լ ինչ ես ուզում ինձանից, ասա:



Աշխարհ է եկել այսօր մի մանուկ,
Եվ շուրջն ամեն ինչ փոխվել է մեկեն,
Արևն ավելի պայծառ է ժպտում,
Մորը թվում է՝ արև է երկնել,
Փոքրիկ մի մանուկ, ժպտացող նշխար,
Մայրիկի համար մի ամբողջ աշխարհ:



Երեկ մարդը կար, իսկ այսօր՝ չկա,
Բոլորն ասում են՝ մեղքն է Աստծու,
Մարդը դեպի ձեզ բացել էր ճամփա,
Մեղադիք ձեզ, ոչ թե Աստծուն:



Մամա...

Միակն է բոլորի համար,
Եվ նուրք բառեր ենք ընծայում նրան,
Նվիրում ենք սեր, երգեր անհամար,
Անունը զրում մեր սրտի վրա:



Հայրենի իմ հող,
Քեզնից հեռանում,
Վերադառնում եմ կարոտով մի նոր,
Ինչպես կարող է՝ որդին մոռանա
Քնքշանքը իր մոր:



Անձրև է տեղում...

Վազում են մարդիկ՝ շտապ, աջ ու ձախ,
Ուզում են մտնել մի մոտ ծածկի տակ,
Այդ պահին միտքս վառում է մի հուշ՝
Թե ոնց գազոնը տվի ոտնատակ:



Իմ երազներում հաճախ եմ թռչում,
Թևածում եմ ես լեռներում ծաղկած,
Երբ արթնանում եմ և ուշքի գալիս,
Տեսնում եմ միայն թևերս ջարդված:



Երբ փոթորկվում է անհանգիստ հոգիս,
Ասես աշխարհն է փոթորկվում այդժամ,
Ասես ծովերն են ելնում ափերից,
Սարերն են քայլում՝ ինձնից անբաժան:



Այնտեղ, ուր կյանքի իմաստը փողն է,
Եվ առուծախ է դառնում ամեն ինչ,
Այնտեղ, ուր չկա սեր ու քարություն,
Այնտեղ չի ծնվում երգը հմայիչ...



Հավատն ու հույսը Աստծո պարզեն է,
Մի թողեք դրանք թառամեն հանկարծ,
Չմոռանաք, որ Աստված մեր Տերն է,
Ու չապրենք երբեք հույսերով հանգած:



Իմ կյանքի ճամփին աշունն է հիմա,
Իմ դուռն է ծեծում, որ ճամփու դնեմ,
Սակայն չեմ թողնում աշունը գնա...
Ես չեմ վախենում, ժամանակը չէ դեռ:



Հանդիպեցինք աշնան մի օր,
Եվ հենց այդ պահին՝ աշունը գնաց,
Բայց հանդիպումը այնքան էր ջերմին,
Ասես զարունն էր եկել գրկաբաց:



Ծնողները ծերանում են օրերի հետ,
Օրերի հետ մանուկներ են
դառնում նրանք,
Ծնողի պես նրանց
հարգենք ու պաշտպանենք,
Որ մենք էլ ենք ծերանալու՝ չմոռանանք:



Աշխարհը մեծ է, սակայն
կյանքը՝ կարճ:
Բոլորն իմաստուն դառնալ չեն կարող,
Մեր նախնիների դասը միշտ հիշենք՝
Սիրենք իրարու, լինենք համբերող:



Կյանքը դաժան է, նաև անարդար,
Այնքան վիշտ ունի և այնքան խոռվք,
Բայց մենք դառնում ենք միշտ
նրան սատար,
Ներում ենք նրան ու դարձնում նորոգ:



Ես հոգու մեջ ունկնդրում եմ և՝ մեղեղի,
և՝ լոռություն,
Պարտեզի մեջ լսում եմ ես սոսափյունը
գարնան հովի,
Բնությունը Աստծո շունչն է՝ և՝ բարիք է,
և՝ բարություն,
Բնությունը իմ երգի մեջ ծփում է՝
ոնց շունչը ծովի:



Ծոգ ամառ էր...
Ծաքճքել էր շուրթը հողի,
Եվ այդ պահին երկնի մովում
Ելան ամպերն՝ առանց ցողի...
Հովերն ապա պար բռնեցին
Եվ ամպերին հեռու տարան...
Դաժան պար էր, սիրտս ցավեց՝
Պարարտ հողը մնաց ծարավ...



Մի վռազեք, մի՛ շտապեք,
Հանգիստ քայլեք կյանքի հունով,
Բույրն զգացեք դուք մայր հողի,
Ապրեք նրա սեզ անունով,
Հողը կյանք է, հողը՝ անուն,
Նրանով ենք մենք վեհանում:



Սենք ոսկու հետ միշտ զգույշ ենք
վարվում,
Հաշիվ ենք պահում՝ միշտ տեղը տեղին:
Մոռանալով մեզ, նրան ենք փարվում,
Չպաշտենք ոսկին՝ մորմորով դեղին:



Երբեք մի՛ ասա՝ «Երբեք»
Ու մի զարմանա երբեք,
Կյանքը հարթեցված ուղի չէ,
Արդարի ճամփան դյուրին չէ,
Աշխարհը մոլորված ատյան է,
Կյանքը գիտության մատյան է:



Ունայնություն...

Իզուր անցկացվող այցելություններ,
զրուցներ դատարկ,
Ինչքա՞ն հայացքներ՝ չարամիտ ու սուր,
Ասե՛ք, որտե՞ղ եք, ի՞ն բարեկամներ,
Ո՞ւմ հետ կարող ենք զրուցել մինչ լույս,
Ըմբռշխնել երգեր, պոեզիա կարդալ,
Հրաժեշտի պահին գոնե զերմ ժպտալ...



Աստված իմ, զիտեմ, որ դու ինձ հետ ես,
Որ պահապանը և պաշտպանն ես իմ,
Որ ես ծնվել եմ վառ աստղի ներքո,
Որ թագուհի եմ... նաև՝ ճորտը քո...



Աստված իմ... նվիրում ես ինձ
ամեն օր երգեր,
Դրանք ինձ համար ծաղկեփունջ են ճոխ,
Դրանցով ձեռք եմ բերում ընկերներ,
Եվ թող իմանան, որ երգերն են քո...



Աստված իմ... դու ես աշխարհն
արարել,
Եվ հիշողություն պարզել մարդուն,
Հիշողությունն այդ բայց ինչո՞ւ խլել,
Մարդն առանց հուշի ոչինչ է կյանքում:



Վերջին ամիսն է աշնան,
Նա մեկ ցուրտ է, մեկ քախծոտ,
Պիտի զիջի ձմռանը,
Բայց չի ուզում հեռանալ.
Ոչինչ անել չես կարող,
Դա օրենքն է Աստծո:



Դու հասկացար կյանքը,
երբ հրաժեշտ տվեց,
Երբ քողածը նրա աննշան էր ու քիչ,
Երբ քունքերիդ վրա ձյունը
հետքն իր քողեց,
Ինքդ ալիսի հյուսես
կյանքը քո լուսաջինզ:



Աստված իմ...
Ես քո հանդեպ սրտաբաց,
Հոգուս փեշերն եմ փռում...
Ուրիշ կերպ էլ չեմ կարող,
Ես չեմ ապրի այն երկրում,
Որտեղ չունեմ հույսի շող,
Ուր արմատն իմ հինը չէ,
Ինչ օտար է՝ իմը չէ:



Դու լռության բառերը երբեք հաշվել
չես կարող,
Տիեզերքի աստղերը երբեք հաշվել
չես կարող,
Մարդու սիրտը աշխարհ է, երազների
մի օվկիան,
Նրա տարբեր լարերը երբեք հաշվել
չես կարող:



Ինձ իետ ի՞նչ է կատարվում...
հասունացե՞լ եմ, արդյոք,
Իմ մտքերն ու խոհերը, ինչպես աշնան
խիս ամպեր,
Մերթ հրաժեշտ են տալիս ու մերթ
դառնում են կարոտ,
Աննինջ սիրո նման են՝ խռովկան ու
անհամբեր:



Ասում են կինը պիտ ուժեղ լինի՝
ճակատագրի հարվածը տանող,
Բայց ես ուզում եմ լինել քնքշասիրտ,
Սիրող գրկի մեջ սիրո լույս ցանող:



Սպասեցի ես զանգի, զանգն այն
սակայն չհնչեց,
Օրս դարձավ խաչմերուկ, սպասումի
մի հերիաք,
Հույս ու հավատ կորցրի, ասես
սիրտս ճմլվեց,
Հիասթափման ծովի մեջ ի՞նչ սպասում,
ի՞նչ բերկրանք:



Զմեռ է... ձյուն է, փոթորիկ, քամի,
Բայց շուտով կանցնի, կհալչի ձյունը,
Գարունը գիտի օրենքն այդ ժամի,
Եվ գիտի՝ ինչ է համբերությունը...
Բայց իմ կարոտը սիրտս ո՞նց տանի:



Բոլորն ասում են. «Ձեռքս չի հասնում,
Ուժս չի ներում, չունեմ ժամանակ»,
Բայց կյանքը թափով գալիս է-զնում...
Ժամանակը քիչ, գործերն՝ անքանակ:



Մի մեղադրեք, մի դատեք մորը,
Թե անգամ ինչ-որ մեղք է կատարել,
Ու մի մոռացեք շատ կարևորը,
Որ իր կրծքի տակ նա է ձեզ պահել:



Չեմ կարող ասել, նաև հասկանալ,
Թե հաճախ ինչ է կատարվում ինձ հետ,
Չեմ կարողանում ես քեզ մոռանալ,
Թեկուզ դարձել ես հեռվում ինչող երգ:



Թե փողն են դարձնում իմաստը կյանքի,
Թե փողն են դարձնում աղոթքը անանց,
Փողն են համարում աղբյուրը փառքի...
Տե՛ր իմ, խղճում եմ ես նման մարդկանց:



Նորից մեզ հյուր է մեր Ամանորը,
Նորից մեկ տարով մենք
դարձանք ավագ,
Ճոխ սեղաններով անցավ մեր օրը.
Եվ ապա հանգիստ ժամերը առանք,
Եվ դա էլ է պետք ու պիտի տանենք,
Ու խորհենք՝ վաղը ինչ պիտի անենք:



Կորցրել եմ ես իմ ազատությունը,
Կախված եմ ասես անդունդից անհուն,
Ինձ չեմ ճանաչում, ասես ճամփորդ եմ,
Ազատությունը իմ երազն է ջինջ՝
Ոչ թե ինձ համար, այլ իմ գոիչի:



Իմ քառատողում կյանքի թրթիռն է,
Սրտերի կանչն է, երազը հոգու,
Իմ քառատողը մարդկանց համար է,
Ծաղկի նման է երգս բողբոջում...



Կնոջ սիրտը օվկիանոս է,
Անսահման է ու փոքրուկուն,
Օվկիանի մեջ մի փարոս է,
Նա սրտեր է միայն փրկում...



Կյանքը հավերժ չէ,
Այն սկիզբ ունի, ունի նաև վերջ,
Եթե ուզում ես ապրել պատվարժան,
Քեզ պատվով պահիր արարքներիդ մեջ:



Ամեն մարդ չէ, որ կարող է
թռղնել հետք,
Ամեն մարդ չէ գոհ
իր սիրուց ու բախտից,
Ամեն մարդու դու չես կարող
մեկնել ձեռք,
Ամեն մարդ չէ, որ խույս կտա
չար ախտից:



Ինչքան հեռու եմ քեզնից,
Այնքան խորս եմ քեզ սիրում,
Այգաբացդ, երեկոդ,
Մոր նման են ինձ գերում,
Սիրում եմ իմ օջախը,
Ընկերներին հարազատ,
Չո արևն եմ սիրում ես
Ու թևելը քո ազատ.
Ինչ իմ երկրի համար է,
Իմ ծիածան-կամարն է...



Կինը կյանք է, կինը՝ սեր,
Սրտերի փուշ պիտ հանի,
Լինի քնքույշ, սիրաբեր
Ու բարություն սերմանի,
Դառնա փարոսն իր ազգի
Եվ ժպիտը լուսայգի:



Ահա, իմ տանն եմ, ծանոթ պատերն են,
Ծանոթ ստվերներ ու դեմքեր ծանոթ,
Իմ լեռնաշխարհի հին ճամփաներն են,
Ինձ համար դարձած երազ ու կարոտ:



Երբ առավոտը նուրք ժպտում է քեզ,
Դու ևս ժպտա, նաև հիշիր ինձ,
Մի՛ մեղադրիր, այլ հաշվիր անյպես,
Որ եկեղեցում ինձ տեսար նորից:



Ես սրտիս մեջ պահում եմ
մորս քնքույշ պատկերը,
Ինչքա՞ն սեր ու բարություն ու երազ
կար կրծքի տակ,
Ահա ինչու չեմ տանում արարքները
չար մարդկանց
Ու համարում եմ նրանց
վայրենի ու ստահակ:



Իմ քաղաքը...

Ինչքա՞ն է հարուստ մարդկանցով քարի,
Լավ ընկերներով՝ զարդը աշխարհի,
Ինչքա՞ն երջանիկ ու ցնծուն օրեր,
Տատի օրորներ, պապի հորովել,
Քաղաք չէ, բերդ է,
Հայրական պատգամ,
մոր քննույշ ձեռք է:



Հրաժեշտ չեմ ասում... ու չեմ գնում ես
Ես սպասում եմ ինչ-ոք մի բանի,
Գուցե կատարվի հրաշք իմ հոգում,
Գուցե երգ դառնա կարուն իմ հոգու,
Բայց շտապում եմ, ես պետք է գնամ,
Իրերս հավաքեմ, ա՝ իս, ինչպե՞ս մնամ:



Ամեն մի օրը, առավոտն ամեն,
Ասես բերկրանքի ծես է մեզ համար,
Երբ մութն է իջնում, խորհում ենք նորեն,
Որ օրը բացվի մոր պես սիրառատ:



Ներողամիտ եմ, ես ներել զիտեմ,
Դուք էլ ինձ ներեք, երբ որ պահը զա,
Թե ինչի համար՝ ես էլ չզիտեմ,
Ներենք իրարու, որ կյանքը ժպտա:



Ես իմ հողի բուրմունքն եմ զգում,
Հմայքն եմ զգում իմ սեզ սարերի,
Ես նրանց սիրուց ցնծում եմ, հարբում,
Նաև պատզամն եմ լսում դարերի:



Աշունը բոլորի համար է,
Գալիս է՝ առանց հարցմունքի,
Նրա դեմ դու մի զայրանա,
Սովորիր նրա մեծ կյանքից:



Դու կին ես... ու միշտ
Հիշիր այդ մասին,
Հիշիր, երբ կյանքիդ աշունը կգա,
Ճերմակը շատ է սազում կնոջը,
Եթե բնությունն է նվիրել նրան:



Գարուն է...
Զմռան օրերից հետոն,
Օրերից հետոն սառն ու ցրտաշունչ,
Եվ ինչքա՞ն լավ է, երբ ձմռան ցրտին
Գարունն է բացվում՝ հոգու մեջ անուրջ:



Հասունանում են երգերը իմ նոր,
Քայլում են ինձ հետ՝ դեպի հեռաստան,
Չարդարում են ինձ ու թևեր տալիս,
Չեն քողնում երբեք, որ հանգստանամ:



Ուր էլ լինում եմ՝ իմ կյանքից անկախ,
Նորից ուզում եմ վերադառնալ տուն,
Պատուհանի մոտ լուր հանգստանալ,
Ծոյել լեռները՝ արծիվների քույն,
Աչքերս փակել ու թևել հեռուն,
Երկրիս պատկերը՝ իմ նոր երգերում:



Խոստացել եմ իմ երգերին՝
Հրաժեշտ տալ տիսրությանը,
Գիտեմ, բոլորն այդ են ուզում,
Հեռվում լինեն կամ թե՝ տանը...
Խոստացել եմ ցանցը նետել
Ու վերացնել չարիք ու չար,
Պատուհանս լրիվ բացել
Եվ արարել նոր երգաշար:



Ինձ «Կին-աշուն» են անվանում սիրով,
Քայց տիսրում եմ ես ու քախծում երկար,
Թեկուզ աշունը վառ է գույներով,
Եվ անվանում են մեծ ստեղծարար,
Սակայն նրանից փախչել չես կարող,
Երգի աղբյուր է ամենակարող:



Եսենինին պաշտում եմ ես,
Շիրազն է իմ հոգու եռքը,
Մալինինը սեր է հրկեզ,
Քայց Զիվանն է սրտիս երգը...



Ծնորհակալ եմ քեզնից, ով մարդ,
Դու իմաստուն ու տեր կամքի,
Որ խոսում ես իմ շուրթերով,
Իմ աչքերով նայում կյանքին:
Ծնորհակալ եմ քեզնից, ով մարդ՝
Ե՛վ իմաստուն, և՝ մեղապարտ:*

* Այդ տոռերը նվիրված էին Արմեն Խաչատուրովիչին... Դրանք ծննդել էին իմ արվեստի հանդեպ հետաքրքրության, իմ հանդեպ ունեցած հավատի, նրա բարության համար երախտագիտության զգացումից... Իսկ որքա՞ն խրատներ, որքա՞ն բարի խոսքեր, որքա՞ն հետաքրքիր զրույցներ՝ պոեզիայի, նրա նշանակության մասին... Ոչ ամեն օր և ոչ ամենքին է բախտ վիճակվում իր կյանքում հանդիպել բյուրեղի պես այլքան մաքուր, տաղանդավոր ու համեստ մարդու, մեծատառով անձնավորության...

Լուսավոր այդ մարդու հիշատակն ընդմիշտ լուսավոր կմնա...



Սերը չի ծերանում, չի մահանում սերը,
Չի խաղաղում երթեք ու չի անհետանում,
Սիրո սահմանները որոշել է Տերը,
Երջանիկը նա է, ով գտնում է սերը:



Օրացույցի մեջ Ութն է Մարտի,
Նայում եմ լոին, շշնջում այսպես,
«Այն մի աշխարհ է թվերում անթիվ,
Նրան մեծարիր իմաստունի պես»:



Աշնան ծաղիկներն ուրիշ բույր ունեն,
Ժպտում են, թախծում գույներով ուրիշ,
Նրանք ապրում են ուրիշ խոհերով,
Խոսում են, հոսում հուներով ուրիշ:
Նրանք ժպտալով տառապում են խոր,
Անքնության մեջ՝ դառնում թևավոր...
Ծաղիկներն աշնան՝ բազմերանգ նարոտ,
Անցյալի փունջ են ու գարնան կարոտ:



Այս մի քանի օրվա մեջ մի ամբողջ
կյանք ապրեցի,
Ինձ հետ էին ամենուր
ընկերներս սրտաբաց,
Թև ու թիկունք ինձ եղան,
նրանց սիրով հարբեցի,
Լեռան առվի նման ջինջ,
ինչպես գարնան այգաբաց:
Համեմատես ինչի՝ հետ,
Աստծո պարզեց են նրանք,
Ընկերության մեջ ազնիվ,
տարիների թև-թիկունք,
Ծնորհակալ եմ նրանց,
պարզեցին ինձ նոր կյանք,
Թևեր տվին արծվային, մի նոր թռիչք՝
դեպ բարձունք:
Ուր լինում եմ աշխարհում,
ինձ հետ գարուններն են մեր,
Գարուններն իմ այդ դուք եք,
հավատարիմ ընկերներ...



Հայրենի հող...

Ե՛վ բարի, և՝ ջերմ, և՝ մեծ իմաստուն,
Բարիքը գրկին, արևը սրտում,
Չնքույշ, բուրավետ,
Մոր պես քաղցր է զրուցում ինձ հետ...
Ուր էլ լինում եմ, հողս հայրենի,
Ինձ տուն է կանչում՝ լեզվով մայրենի...
Իմ հոգու մեջ է, իմ սրտի վրա,
Իմ ամրող կյանքով ես պարտք եմ նրան:



Եղբայրը... անչափ հեռու է, անհաս,
Սակայն տարածքը արգելք չէ երբեք,
Երբ սիրտդ հանկարծ
Տիրում է, բախծում,
Նա հովանի է... նման Աստծու...



Հույր իմ...

Մեկ-մեկ ուզում եմ քեզ

մայր անվանել,

Մեկ-մեկ ուզում եմ ձեռքդ համբուրել

երախտիքով խոր,

Որ մայրություն ես արել սրտագին...

Ընորհակալ եմ մեր նուրբ մայրիկին,

որ ծնել է քեզ

ու նվիրել մեզ...

Ընորհակալ եմ բարեգութ Աստծուն...

Ես սիրում եմ քեզ քնքշասիրտ մոր պես...



Անցնում են տարիները... Կյանքն ասես չընթերցված գիրք լինի՝ մինչև վերջ չիմաստնավորված... Նրա յուրաքանչյուր էջը քո անցած ու անդառնալի ճանապարհն է... Այն կարող է հարթ կամ փշոտ ճանապարհ լինել... Կարևորը՝ հետադարձ հայացք նետելով, հիշել ու ողջունել այն ամեն լուսավորը, որ տեղ գտավ քո կյանքում... Տարիների հետ հուշերն ավելի վառ երանգներ են ստանում, առավել գիտակցարար ընկալվում, իսկ որոշ անցքեր՝ առեղծված մնում...



Կարևոր չէ՝ որտեղ ես հայտնվել ճակատագրի կամոք, որտեղ է քեզ նետել կյանքը, ինչ անակնկալներ ու փորձություններ է այն պատրաստում քո համար...

Կարևորն այն է, որ այօր, հիմա դու այստեղ ես... Դու քայլում ես քո Հռովի վրա, հանդիպում քո ընկերներին, նայում գեղազարդ լեռներին, շնչում նրա մաքոր, լեռնային օդը, ըմբոշխնում նրա բնությունն ու հիշողության մեջ արթնացնում երջանիկ օրերն ու ակնթարթները...



Պոեզիան ու արվեստն անխուսափելի են...
Նրանք մարդկանց միջև հաղորդակցության
լեզուն են մեր մոլորակի վրա: Միայն նրանց
միջոցով ենք կարող տեսնել, փոխանցել, լսել
ու գգալ սրտի զարկը, մարդկային հոգու հուզ-
մունքը... Միայն նրանց է հոգին թույլ տալիս
հպվել իրեն, իր ամենանվիրական անկյուննե-
րին ու միայն նրանց միջոցով ենք զգում ու
հասկանում, որ միայնակ չենք Երկրի վրա, որ
բոլորս միատեսակ ենք սիրում, կարոտում,
տառապում...Ու բոլորիս միատեսակ է հու-
զում մեր Երկրի ապագան...



Ամեն ինչ անցնում է... և՝ մանկություն, և՝ պատաճեկություն... Քեզ հետ մնում է միայն հիշողությունը... Այն ավելի երկար է դառնում, իսկ կյանքը՝ ավելի կարճ... Ժամանակն անողոք է, այն բաժանում է անցյալը ներկայից, և անցյալը դառնում է հեռու, անհասանելի՝ ինչպես բարձր երկնքում սավառնող ամպերը... Նրան չես հասնի, չես դիպչի...



Սա իմ աշխարհն է...

աշխարհ, որտեղ շողում է մեղմ, տաքուկ
արևը...որտեղ երկինքը սփռված է վառ,
բոցկլտացող աստղերով... որտեղ լուսնիա
գիշերը հերթափոխում է հոգնած, վաստակած
օրվան, որտեղ երկնակամարը պատված է
թերև ամպերով, որոնց հետ անվերադարձ սա-
հում են մեր տարիները... որտեղ ձմռանը եր-
կիրը զգեստավորվում է ճերմակ, փափուկ
մուշտակով... իսկ գարնանը՝ ծաղկափթթիք
դաշտեր, հովիտներ...իսկ ամռանը՝ անծայ-
րածիր, հրապուրող ծովը, թռչկոտող առվակ-
ները, դայլայլող ստիսակները...որտեղ աշնա-
նը ծառերը խայտարդես ու երփնավառ հան-
դերձանքով են պճնվում... Ես ապրեցի իմ

ամառը, գարունը... Հիմա իմ աշունն եմ ապրում ու այնքա՞ն գեղեցիկ նրա հետ ներդաշնակվում... Իսկ ձմեռը դեռ հեռո՞ւ է, նրա մասին մտածել դեռ չեմ ուզում...

Այս աշխարհը պարզե է մեզ Աստծուց... Հնարավորինս երկար ապրենք՝ այս աշխարհում, այսօր... Իսկ թե ինչպիսին կլինի այն վաղը, միայն Աստծուն չէ, որ պիտի մտահոգի...



Իմ հուշերում պահպանված մի դեպք...

*Այն կեղերում է հոգիս, հիշեցնում է իմ՝
որ ամպերից իջնել չի կարելի....*

Ամառ էր... ընկերներով որոշել էինք Զերմուկ գնալ՝ ընտանիքներով, երեխաների հետ հանգստանալու... Ուրախ ընկերախումք էր հավաքվել... Անցավ մի շաբաթ, ինչ-որ քան ինձ չէր հերիքում... ու հանկարծ հասկացա՝ առանձնանալու կարիք ունեի... Եվ ես հաճախ էի կտրվում ընկերների շրջապատից ու պարզապես թափառում, գտնում էի գեղեցիկ վայրեր, ու այդ գեղեցկությունից իմ հոգում անհասկանալի մի քան էր կատարվում... Բառերը սեղմվել էին կրծքիս ու փորձում էին դուրս հորդել... ինչպես մի երեխա, որ ինն ամիս հետո նեղվածք է զգում ու ճշալով լույս աշխարհ է գալիս... Իմ «երեխան» լույս աշխարհ եկավ՝ երկշոտ ու հոգին հուզող տողերի տեսքով՝ արցունքներով, որ հնուում էին այ-

տերն ի վար, և որոնց համար բացատրություն չէի գտնում... Ես թաքնվում էի հետաքրքրասեր հայացըներից, որոնք փորձում էին հասկանալ իմ հաճախակի անհայտանալը... Սիայն Նա էր զգում ու ամեն կերպ փորձում ինձ հնարավորություն ընձեռել՝ առանձնանալու... Նա իմ ձեռքին նկատում էր նոթատետրն ու գրիչը, որոնք չէի մոռանում հետո վերցնել... Իսկ երեկոները, նա խնդրում էր ինձ կարդալ գրածս, այնուհետև լուր համբուրում էր ինձ... Երկուս էլ լրում էինք, որքա՞ն շնորհակալ էի նրան լրության այդ բովեների համար... Ես զգում էի նրա շունչը, Նա հասկանում էր, որ ինձ հետ ինչ-որ քան է կատարվում, ու դա նրան չէր զարմացնում... Եկավ տուն վերադառնալու ժամանակը... Նա անսպասելիորեն գրկեց ինձ, նայեց ուղիղ աչքերիս մեջ ու ասաց. «Եթե ուզում ես, կարող ես մի քանի օր էլ մնալ, հետո ես կգամ քո հետևից...»: Ես փայլեցի, ժպտացի ու չէի կարողանում հասկանալ՝ կատակո՞ւմ է նա, թե՞ լուրջ է ասում... Բայց Նա իր համար արդեն որոշել էր, և կարիք չկար մտածելու՝ ինչ պատասխանել ...

Հաջորդ առավոտ երեխաների հետ նա մեկնեց ... Ես կարող էի տնօրինել Ժամանակս... Բայց դա դեռ ամենը չէր... Լուրջ, որ նա երեխաների հետ հեռացել ու քողել է ինձ, արագ տարածվեց հանգստացողների շրջանում... Բոլորը նայում էին հետևիցս, ինչ-որ բան շշնչում ու կարեկցանքով էին ինձ նայում ... Նրանք ինձ խղճում էին ու ամեն կերպ հուսադրում, հրավիրում իրենց սեղանը և խանգարում իմ առանձնությանը... Նրանք որոշել էին, որ նա ինձ քողել է, և իմ լրությունն ընկալում էին որպես իմ տառապանք... Ես նրանց խոսակցությունների ընդհանուր թեման դարձա, և ես զանգեցի նրան ... Որքա՞ն մեծ էր համընդհանուր զարմանքը, երբ նա առավոտյան եկավ, ու ես պարզապես դուրս վագեցի ու նետվեցի նրա զիրկը... Մեզ թվում էր, որ բաժանումը տևեց երկա՞ր, երկա՞ր... Բոլորը ծափահարում էին, անկեղծ ուրախանում մեզ համար՝ այդպես էլ չհասկանալով նրա արարքը, և իմ աշխարհը..., որտեղ ապրում եմ, և որը երկար տարիներ պահում-պահպանում եմ...

СОДЕРЖАНИЕ

Сократ Ханян. Очарование осенних цветов 3

ПРИВЕТСТВУЮТ ПОЧИТАТЕЛИ ЛИРИКИ ЦОВИНАР

*Микаэл Гаджиян. Букет с осенними оттенками,
благоухающие весенним ароматом* 14

Ашот Бегларян. Поэзия души и сердца

Цовинар Багдасарян 16

Каринэ Алавердян. Любовь -ко всем 19

Здравствуйте, дорогая Цовинар Минасовна 21

Мои четыре строчки... 25

Если семьдесят стукнуло тебе... 25

Я дома... 26

Семьдесят лет... 26

Высоко, высоко... 27

Я обещала стихам своим... 27

Сколько слов в душе накопилось... 28

Каждый миг жизни... 28

Снова в «гордом» одиночестве я... 29

Нет! Я плакать не буду... 29

Мелодия души... 30

Слово лечит...	30
Я часто брожу по лесам...	31
Лето не хочет уйти...	31
Свежо и прохладно...	32
Красивая женщина...	32
Мой дом - моя крепость...	33
Не верьте, что женщине хорошо одной...	33
Семь изумрудных камней у меня...	34
Дочка...	36
Сын...	37
Как хорошо жить на Земле...	38
Жизнь!...	39
Человек по жизни - одинок...	40
Мать к сыну собралась...	40
Хожу по улицам своим...	41
Не спится Музе моей...	41
Мой младший сын...	42
Дождь...	42
Снова утро наступило...	43
Помните о детях на Земле...	43
Не держи обиды в себе...	44
Мать...	44
Я не прощаюсь...	45
Время идет...	45
Мама... мама...	46

Меня согревают не солнечные лучи...	46
Мама...	47
Армянский дудук...	48
Человек...	48
Родился маленький человечик...	49
Есть человек и нет человека...	49
Мама...	50
Родина моя...	50
Дождь...	51
Я часто во сне улетаю...	51
Словно буря разразилась...	52
Там, где смыслом жизни становятся деньги ...	52
Вера...	53
Осень у порога моего...	53
Мы встретились с нею...	54
Годы идут...	54
Мир большой...	55
Жизнь сурова и несправедлива...	55
Услышать тишину...	56
Знойное лето...	56
Не торопитесь...	57
Мы бережно относимся к деньгам...	57
Волшебная музыка...	58
Никогда не говори: «Никогда»...	58
Суeta...	59

Бог мой...	59
Бог мой...	60
Бог мой, Ты сотворил этот мир...	60
Последний месяц осени...	61
Ты понял жизнь...	61
Бог мой...	62
Сколько в молчанье слов...	62
Что со мною...	63
Женщина должна быть сильной...	63
Я ждала звонка...	64
Зима...	64
Все некогда...	65
Не вините, не осуждайте мать...	65
Не могу объяснить...	66
Если деньги - смысл жизни...	66
Вот и Новый год прошел...	67
Я свободу потеряла...	68
Сколько можно вместить...	68
Сердце женщины - океан...	69
Жизнь не бесконечна...	69
Не каждая оставит след в душе...	70
Чем дальше от тебя...	70
Быть женщиной - значит жить...	71
Вот я и дома...	71
Если утро улыбнется тебе...	72

Я в сердце храню...	72
Город мой...	73
Я не прощаюсь...	73
Каждый день и каждое утро...	74
Я всех за все прощаю...	74
Я чувствую запах моей Земли...	75
Когда мне не спится...	75
Осень приходит ко всем...	76
Ты - женщина...	76
Весна...	77
Стихи мои...	77
Где бы я ни была...	78
Я обещала стихам своим...	78
«Женщина-осень»...	79
Я Есенина понимаю...	79
Спасибо тебе человек...	80
Любовь не стареет...	81
Восьмое марта...	81
Что пожелать вам, женщины мои...	82
Осенние цветы...	83
За эти несколько дней...	84
Земля моя...	85
Сестричка моя...	86
Брат...	87
Сыну...	88

<i>Амаяк Багдасарян.</i> Как трудно жить...	89
Когда печаль душой владеет...	90
Дни летят...	91
Здравствуй, Мама...	92
С Новым годом поздравляю...	93
Мысли, как ветер, как ураган...	94
И снова ввысь стремлюсь...	95
Все наши беды и печали...	96
Нам хватит горя и печали...	97
Нет слаще слова...	98
Не верь тому, кто много обещает...	99
Дорогая и милая Мама...	99
Любимые... не умирают...	100
Нам помнить надо все...	101
Пусть дни твои летят...	102
Сон ушел от меня...	103
Жизнь — это игра...	103
Иногда, чтоб уйти от суэты...	104
Это мой мир...	105
Поэзия и искусство неизбежны...	106
Все проходит...	106
Проходят годы...	107
Неважно, где ты...	107
Мир, в котором я живу...	108

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սովորակի Խանյան. Աշնան ծաղիկների հմայքը ... 112

<i>ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆ ԾՈՎԻՆԱՐԻ</i>	
<i>ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ</i>	
<i>Միքայել Հաջյան. Աշնան երանգներով</i>	
գարնանաբույր ծաղկեփունջ 124	
<i>Աշուղ Բեզլարյան. Ծովինար Բաղդասարյանի</i>	
հոգու ու սրտի պոեզիան 127	
<i>Կարինի Ալավերդյան. Սեր՝ ամենեցուն... 130</i>	
<i>Սոնյա Յաղության. Ծովինար Մինասովնա 132</i>	
<i>Ֆրիդա Սահակյան. Աքրոստիկոս 135</i>	
<i>Հայկանուշ Նազինյան. Ծովինար</i>	
Բաղդասարյանի պոեզիան 136	
<i>Միքայել Հարությունյան. Աքրոստիկոս 140</i>	
<i>Համլիկ Կարճիկյան. Ծովինարին 141</i>	
 Իմ հոգեբուխ քառատողը... 142	
<i>Յոք տասնյակդ, երբ քո դուռն է ծեծում... 142</i>	
<i>Ես իմ տանն եմ... 143</i>	
<i>Յոք տասնյակ տարի 143</i>	

Սիրո, հավատի խաչն է շողշողում...	144
Ես երդվել եմ իմ երգերին...	144
Այնքա՞ն բառեր են եռում իմ հոգում...	145
Կյանքի պահերը անկրկնելի են...	145
Ես նորից «հապարտ» մենության մեջ եմ...	146
Ոչ, չեմ լացելու...	146
Հոգու մեղեղի...	147
Բառը բուժում է...	147
Հաճախ եմ շրջում թափ անտառներում...	148
Ամառն համառ է...	149
Իմ խոհերի մեջ թարմ է ամեն ինչ...	150
Գեղեցկուիի կին...	150
Իմ տունն իմ քերդն է...	151
Յոթը զմրոխտե, անգին քար ունեմ...	151
Դուստրը...	152
Որդին...	153
Ի՞նչ լավ է՝ ապրել այս երկրի վրա...	154
Սի հավատացեք, որ մենակ կինը քերկրանքի մեջ է...	155
Ծնորհակալ եմ քեզանից...	156
Մարդը մենակ է իր ամբողջ կյանքում...	157
Մայրն այցելեց տունը որդու...	157
Քայլում եմ մեր փողոցներով...	158

Մնացել է ոչ քի՞չ, ոչ շա՞տ...	159
Վերջին աշունը...	160
Չի քնում իմ Մուսան երբեք...	160
Իմ կրտսեր որդին...	161
Անձրև...	161
Առավոտը աչքը բացեց...	162
Սի մոռացեք Երկրում մանկանց...	162
Վիրապորանքը մի պահիր քո մեջ...	163
Մայրը լրին է տառապում կյանքում...	163
Հրաժեշտ չեմ տալիս...	164
Տարիներն արագ անցնում են...	164
Մայր Աստված է...	165
Ինձ չեն ջերմացնում շողերն արևի...	165
Մամա...	166
Հայկական դուդուկ...	167
Ով մարդ, լավ լսիր...	167
Աշխարհ է եկել այսօր մի մանուկ...	168
Երեկ մարդը կար...	168
Մամա...	169
Հայրենի իմ հող...	169
Անձրև է տեղում...	170
Իմ երազներում հաճախ եմ թռչում...	170
Երբ փոթորկվում է անհանգիստ հոգիս...	171

Այնտեղ,ուր կյանքի իմաստը փողն է....	171
Հավատն ու հույսը...	172
Իմ կյանքի ճամփին աշունն է հիմա...	172
Հանդիպեցինք աշնան մի օր...	173
Ծնողները ծերանում են օրերի հետ...	173
Աշխարհը մեծ է....	174
Կյանքը դաժան է....	174
Ես հոգու մեջ ունկնդրում եմ...	175
Ծոգ ամառ էր...	176
Սի փոազեր, մի՛ շտապեր...	177
Մենք ուկու հետ միշտ զգույշ ենք վարվում....	177
Լուս եմ ես կախարդական մեղեղին...	178
Երբեք մի՛ ասա՝ «երբեք»...	178
Ունայնություն...	179
Աստված իմ, զիտեմ, որ դու ինձ հետ ես...	180
Աստված իմ....	180
Աստված իմ...դու ես աշխարհն արարել...	181
Վերջին ամիսն է աշնան...	181
Դու հասկացար կյանքը...	182
Աստված իմ....	183
Դու լուության բառերը երբեք հաշվել չես կարող...	184
Ինձ հետ ի՞նչ է կատարվում...	185

Ասում են կինը պիտ ուժեղ լինի...	186
Սպասեցի ես զանգի...	186
Զմեռ է...	187
Բոլորն ասում են...	187
Մի մեղադրեք, մի դատեք մորը...	188
Չեմ կարող ասել...	188
Թե փողն են դարձնում իմաստը կյանքի...	189
Նորից մեզ հյուր է մեր Ամանորը...	189
Կորցրել եմ ես իմ ազատությունը...	190
Իմ քառատողում կյանքի բրդիոն է...	190
Կնոջ սիրտը օվկիանոս է...	191
Կյանքը հավերժ չէ...	191
Ամեն մարդ չէ, որ կարող է բողնել հետք...	192
Ինչքան հեռու եմ քեզմից...	193
Կինը կյանք է...	194
Ահա, իմ տաճն եմ...	194
Երբ առավոտը նուրբ ժպտում է քեզ...	195
Ես սրտիս մեջ պահում եմ...	195
Իմ քաղաքը...	196
Հրաժեշտ չեմ ասում...	197
Ամեն մի օրը...	197
Ներողամիտ եմ...	198
Ես իմ հողի բուրմունքն եմ զգում...	198

Անքուն մնալոց չեմ տխրում երբեք...	199
Աշունը բոլորի համար է...	199
Դու կին ես...	200
Գարուն է...	200
Հասունանում են երգերը իմ նոր...	201
Ուր էլ լինում եմ...	201
Խոստացել եմ իմ երգերին...	202
Ինձ «Կին-աշուն» են անվանում...	203
Եսեմինին պաշտում եմ ես...	203
Շնորհակալ եմ քեզնից...	204
Սերը չի ծերանում...	205
Օրացույցի մեջ Ուրն է Մարտի...	205
Աշնան ծաղիկներն	206
Այս մի քանի օրվա մեջ	207
Հայրենի հող...	208
Եղբայրը...	209
Քույր իմ...	210
Անցնում են տարիները...	211
Կարևոր չէ՝ որտեղ ես հայտնվել...	212
Պոեզիան ու արվեստն անխուսափելի են...	213
Ամեն ինչ անցնում է...	214
Սա իմ աշխարհն է...	215
Ամառ էր...	217

**Շօվինար Բագդասարյան
Ծովինար Բաղդասարյան**

**ОСЕННИЕ ЦВЕТЫ
ԱԾՆԱԾՆ ԾԱՌՄԿԱՆԱՐ**

Թարգմանիչ, առաջաբանի հեղինակ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ **Սոկրատ ԽԱՎԱՅՅԱՆ**

Խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ

Վարդան ՀԱԿՈԲՅԱՆ

Սրբագրիչ՝

Ո-ուսերեն շարվածքը՝

Հայերեն շարվածքը՝

Համակարգչային էջապրոցը՝

Կազմի ձևավորումը՝

Ս.Խաչոնց

Ծ.Բաղդասարյանի

Ն.Գրիգորյանի

Թ.Հարությունյանի

Մ.Սայիյանի

Տպագրություն՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84^{1/16}
Ծավալը՝ 14.5 տպ. մամուլ+16 էջ ներդիր: Տպագրանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում:
375000, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25

Հեռ. /+374/47946360, /+374/97302002 Էլ. հասցե՝ dizak-plus@mail.ru

Цовинар

Осенние цветы
